

Թող ուսուցիչները երբեք չդադարեն լուրջ գիտնական գրադժուներին՝ մանաւանդ իւրեանց առարկային վերաբերեալ: Եթէ տարրական դպրոցի դասատուի մէջ մարի գիտնական եռանդը, նա անխուսափելի կերպով կընկնի մանկավարժութեան շար ոգիների ձեռքը, որոնք են՝ մեքենայականութիւն, միօրինակութիւն, անբարեխղճութիւն:

Ճշմարտութիւն որոնելն ու որոշել թէ ո՞րն է ճշմարտ՝ ոչ մի շրջանի մարդոց համար չունի այն նշանակութիւնը, ինչ որ այն մարդոց, որոնք կոչուած են ճշմարտութիւն տարածելու, այն է ուսուցիչների համար: Եթէ ուսուցիչը կամենում է ազդել ժամանակակից կեանքի վերայ, նա պէտք է ապրի այդ կեանքով:

Այն անձինք, որոնք կոչուած են ուսուցանելու, չպէտք է որ և է կուսակցութեան պատկանեն: Ոչ քաղաքական, ոչ կրօնական կուսակցական վեճերը դպրոցի հետ առնչութիւն չունին: Բայց դորանից չպէտք է եզրակացնել, թէ ուսուցիչն իրաւունք ունի հեռու մնալ ժամանակակից կեանքից, ժամանակի հոսանքին չենթարկուել և XIX դարում ապրել այնպէս, որ միևնոյն էր թէ մի ուրիշ դարում ծնուած լինէր: Մարդիկ իւրեանց դարի դաւաններ են, և պէտք է լինին, իսկ կրթուած մարդիկ իւրեանց դարի դաւան լինում են ոչ միայն բնազդօրէն, այլ և գիտակցօրէն:

Ուսուցչի համար մարդկային հասարակութեան մասին ունեցած ծանօթութիւնն եթէ ոչ աւելի, գոնէ ոչ պակաս կարեւոր է, քան թէ բնութեան ծանօթութիւնը:

Ուսուցչի ամենօրեայ հարցը միայն նիւթա-

կան սնունդը չէ, այլ նաև հոգեորդ, իսկ հոգեոր սնունդի համար պէտք են ծախքեր—որոնք պահանջում են նիւթական միջոցներ: Ապա ուրեմն բաւարար չի կարելի համարել ուսուցիչների այնչափ վարձատրութիւնը, որ նոցա միջոց չի տալիս հոգեոր սնունդ ձեռք բերելու՝ զրբեր հայթայթելու, որ զրկում է նորան ծանր աշխատանքից յետոյ հոգեով ու մարմնով հանգիստ առնելու, բարեկամների հետ կենդանի յարաբերութիւն պահելու և մարդավարի կեանք վարելու հնարաւորութիւնից:

Ուսուցչի ամենամեծ առաքինութիւնն ու զարդը համեստութիւնն է, բայց անտեղի այնտեղ ուր ամբարտաւան վարմունքի է հանդիպում:

Փոքրօգիները ոչ մի տեղ այնքան վնասակար չեն, որքան գպրոցներ կառավարելու գործում:

Դպրոցական գործերում և կրթութեան ասպարիզի վերայ շարժելի վատ սկզբունք է, Բոլոր ծառերի վերայ միևնոյն կեղևը չէ, ասում է լեւսսինց և հաստատում, որ հէնց դորանումն է գեղեցկութիւնը:

Յարգանք գէպի ժողովուրդը բարձր դասակարգի կողմից, բարեխիղճ վերաբերում գէպի ազգի իսկական շահերը, մարդասիրութիւն ու քաղաքակրթութիւն տարածելու ջանք—սոքա են գլխաւոր պայմաններն այն գործի յաջող զարգացման, որին ծառայելու կոչուած են դպրոցն ու ուսուցիչը: *

Գ. Ղ.

* Թարգմ. Вѣстникъ Воспитанія. 1897, октябрь.

ՅԱՆՔԱՐԵՄՈՒ ԼՐԱՐԱՏԻ 1898 Թ. ՕԳՈՍՏՈՍ.

(Շարունակութիւն) *

ԸՍՏ ՍԱՐԳԻՍ ԵՐԷՑԻ՝ ՄԵՇԻՆ ՎԱՐԴԱՆԻ ՅՕՐԻՆԱՄ

ՎԵՐԱՅՄԱՆ ԽԱՉԻ

Բ. ԱՆՈՒՐ.

ԴՅ. «Գաւազան գորտիքան» Տէր յերկնից-ից կրճատած երեք տները

Գաւազան: Սա է, զէն: Սա է աթոռ: Սա է սեղան: Սա է կարապետ:

«Սա է թագ պարծանաց կաթնուղիկէ կեկեղեցւոյ. և ի սմա է թագաւորեալ քրիստոս որդին աստուծոյ. և սովաւ յաղթեացուք անաւրէն թշնամւոյն:

Սա է բուրվառ խնկալի. և ի սմա հոտոտեցաւ տէրն ի հոտ անուշից. և սովաւ յաղթեացուք անաւրէն թշնամւոյն:

Սա է զիւաց հալածիչ և պարխոպ ամբութեան հաւատացիոց. և սովաւ յաղթեացուք անաւրէն թշնամւոյն:

Գ. ԱՆՈՒՐ *

ԴՅ. Ա. «Քառակերպեան աթոռ ակն

1. ԾԻ.— և ի սմա է բուրեայ հոտ անաւորեան.

* Ի գիտութիւն մեր բնթերցողներին հարկ ենք համարում յայտնել, որ Վերացման խաչի հեռեւեալ ձաշուքը և Մանկութեան յոգ. «Ապաւինեցաք ի խաչ քո» յայտնի շարականի պէս ունին միօրինակ տաղաչափութիւն, և վերջանում են այս միօրինակ նախադասութեամբ՝ «ընդ անկարմնոցն դասուցն քոց երկրպագանմով», որոնք են՝

* Տես «Արարես» 1898 թ. համար է. եր. 325:

«Գաւազան» է— ԺԵ 176 թ. ԻԴ 187-թ. ԽԲ 250-ա. ԾԻ 281-թ. ԼԳ 179-թ. (ԺԵ, ԻԴ, ԽԲ, ԼԳ, ունին միայն Բ տունը):

պատուական, մարգարիտ ¹անգին, զէն ան-
պարտելի ²ընդդէմ թշնամոյն, ապաւէն և
յոյս հաւատացելոյ:

³Բառաստայր սուսեր ընդդէմ բեղբերու-
ղոյ ⁴զնգին պատրուակ հայկին, կառս վե-
րադիտող բանին աստուծոյ, ապաւէն և յոյս
հաւատացելոյ:

Աշտանակ ոսկի, գանձ անքննելի, ⁵զա-
ւազան ծովահերձ, ուղղափառ թագաւորացն
⁶հաստատութիւն, ապաւէն և յոյս հաւա-
տացելոյ: ⁷

Գ. Ե. Զ. ԲԱՐՏՆԵՄ ԶՔԵԳ ՓԱՅՄ ԽԱՅԻ
աստուածընկալ սուրբ նշան, որ կանգնեցար
ի յերկրի յաղթող ընդդէմ թշնամոյն, ընդ
անմարմնոցն ¹զասուցն քեզ երկիրպաղանեմք:

Գ. աւուր. ճշ. Օրհնեմք զքեզ փայտ խաչի.

Դ. » ճշ. Փայտ կենաց զօրութեան.

Ե. » ճշ. Յաջեղ ձայնէն յիսուսի.

Զ. » մկ. Ի վեց աւուր երրորդի.

Այսպէս էլ ունին այլ տաղաշարութիւն և վերջա-
նում են Ապաւէն և յոյս հաւատացելոյ նախադասու-
թեամբ:

Գ. աւուր. մկ. Քառակերպեան աթոռ.

Դ. » մկ. Տնկեցար ի յերկրի.

Ե. » ճշ. Փայտ կենաց և զարգ.

ըստ իս այս բոլորի հեղինակը եղել է ինձ անյայտ
մի կամ երկու անձնաւորութիւն:

ա Գտնուում է—Ժ 146-ա. կրճատ. ԺԶ 218-ա.
ԺԷ 187-ա. ԼԲ 225-ր. ԽԼ 196-ր. ԽԲ 250-ա. ԽԶ
368-ր. ԾԼ 273-ր. ԿԴ 915. ԿԹ 195 կրճատ.

1. ԺԷ—յուսափայլ.

2. ԺԷ—ընդդէմ անեղևոյր քշ.

5. ԺԶ, ԽԼ, ԾԼ, ԿԴ—խառնաս. ԺԷ—խա-
ռասուր.

4. ԺԷ—զատաց, զատազան ծովահերձ, ուղղափառ
թագաւորացն հաստատութիւն, ապաւէն: (Գ տան կէսը)

5. ԺԷ—մասնուակ հայկին, կառս վերադիտող բա-
նին աստուծոյ, ապաւէն: (Բ տան կէսը)

6. ԽԼ, ԾԼ—հաստատութեան.

7. ԺԷ, ունի Դ տուն «Հոգեմարտեայ» և Ե
տուն—«Անմահութեան տունի անխնամայի դրախտի շա-
ռափոյ, որ տնկեցար ի մէջ երկրի պտղակեցեղ զհիսուս
ապաւէն»: Իսկ «Հոգեմարտեայն» է Զ. աւուր «Փայտ
կենաց և զարգ» ճշ-ի Բ. տունը. տես անդ.

բ. Գտնուում է—Է 239-ր. Ժ 146-ա կրճատ
ԺԶ 218-ր. ԺԷ 172-ա. ԽԼ 196-ր. ԽԲ 254-ա. ԽԶ
368-ր. ԾԼ 273-ր. ԾԷ 281-ր. ԿԲ 322-ր. ԿԴ 915.
ԿԹ 194-ր կրճատ. № 372 2եռ. Բաղդատութիւն
Հարականաց, 27-ր:

1. ԺԷ, ԿԲ—դասուց.

Որ ի լուսոյ կազմեցար ²աստուածընկալ
սուրբ նշան, բարձաւ եղեր արարչին, բար-
ձեր ³զանձս աղամայ, ընդ անմարմնոցն դա-
սուցն քեզ երկիրպաղանեմք:

Որ անշիտթ միութեամբ բեռեցաւ ի
քեզ ⁴տէրն, և յանձն էտ ⁵զանարգանս
և զապտակումն ի հրէից, ընդ անմարմնոցն
զասուց քեզ երկիրպաղանեմք:

ԴԷ. ԶԶ. Գ Թագումն անձառելի որ ի հաւել
ծագեցար, լուսաւորեցեր զարարածս, այսուր
կաթողիկէ եկեղեցի ուրախութեամբ մեծաւ
տաւնէ, ալէլուի:

Անարատ գառն աստուծոյ խոնարհեալ
ի զննումն ի վերա[յ] խաչին, և սեղան հրեշ-
տակաց դնի առաջի մարգկան, յորմէ սեղա-
նո[յ] բուրնաց անուշահոտ հոգին, ալէլուիս:

Սա է գուռն երկնից, յորմէ զաւրք հը-
րեշտակաց և զուղբ քերթից սպասաւորին,
վերհամբարձեալ զմարմինն տէրունական, ա-
ղաղակն ասելով, կենդանութիւն երկնի և
երկրի, ալէլուիս:

Դ. Աւուր.

ԴԷ. Զ. ա Ընկեցար ի յերկրի կայ ի զող-
որթայ, փոխանակ ծառոյն ²զխառութեան
զքրիստոս պաղարեւոցեր, ապաւէն և յոյս
հաւատացելոյ:

³Թագ թագաւորին յախտնից՝ պարիսպ
⁴հաւատոյ, որ զապստամբ զթշնամին ⁵խոր-

2. ԽԲ—աստուածաբար.

5. ԺԷ, ԽԲ—զանձսն. Է—զյանցանն.

4. ԺԶ, ԽԶ, ԾԼ—հր.

5. Է, ԿԲ—զապստակումն և զանարգանս. ԺԶ,
ԽԼ, ԽԲ, ԽԶ, ԾԼ, ԾԷ—զխոնարհ և զապստակումն:
Է և ԿԲ Հարականների մէջ գրուած է նախ «Որ
անշիտթ» և ապա «Որ ի լուսոյ»:

գ. Գտնուում է—ԺԷ 176-ա: Հաւականս գրուած
է սոյն օրում երգելիք Շողակարի հ. ո. 8. տակ.

ա. Գտնուում է—Ժ 148-ա. ԺԷ 187-ա. ԼԲ
228-ա. ԽԼ 198-ա. ԽԲ 251-ր. ԽԶ 369-ա. ԾԼ
277-ա. ԿԴ 916. ԿԹ 195-ր.

1. ԽԶ—տնկեցար.

2. ԾԼ—զիստութեան.

5. ԺԷ, շարականի գրիչը, այս տունը կցելով
Զ. աւուր «Խորայիտան բանակին» մի-ի Բ և Գ տների
հետ, կազմել է Գիւտ խաչի մկ:

4. ԺԷ—ամբարտաւան.

5. ԺԷ—վանեաց.

տակեաց ի խորս ծովուն. ապաւէն և յոյս
հաւատացելոց:

6 իմաստութիւնն աստուծոյ ի քեզ 7 բնա-
կեցաւ. զի դու եղեր սեղան 8 զառնին անմա-
հի. ապաւէն և յոյս հաւատացելոց:

Հի. Հ. Քայտ կենաց զաւրութեան և
պատուանդան անեղին. որ զարարիչն երկնի
և երկրի 1 ի քեզ տեսաք բեռեռեալ. ընդ ան-
մարմնոցն 2 զասուցն քեզ երկիրպագանեմք:

Լոյս փառաց էական 3 արեգակնակերպ
ճառագայթ. 4 սակեճաճանչ ձեմարան դու
5 երկնաւոր արքային. ընդ անմարմնոցն դա-
սուցն քեզ երկիրպագանեմք:

Երեւելից փայլելով՝ դուշակ գոլոյ միած-
նին. երկիրս նոր 6 նորոգի իջմամբ. որդւոյն
աստուծոյ. ընդ անմարմնոցն դասուցն քեզ
երկիրպագանեմք:

Հի. Հ. Քայտ կենաց և զարդ սուրբ ե-
կեղեցւոյ. զէն սուր և հալածիչ 1 լիզէն զա-
րացն. 2 ապաւէն և յոյս հաւատացելոց:

Հոյժալարեալ բնակեցար 3 ի մայրսն լի-
բանանու. իջանելով ի խորս անդնդոց փրկե-

6 ԺԷ. Հարականի գրիչը այս տունը միացնե-
լով «Բարաշիւան քանակին» (Զ. աւուր մկ.) «Փայտ կե-
նաց և զարդ» (օրուանս ան.) և «Երեւելի կենարար
յերկնից երևեալ մարգարէն գոյեւ: Փայտ կենաց արեւայ
ի հաց կեկոյանի. միսն որոյ ինչ երկրպագեմք յօգնորին
մեզ ժամանեա ուր խառնել և յաղորդ սուրբ նշանն ան-
ծանօթ ամեն հետ կազմել է Գիւտ խաչի հր:

7. ԺԷ.—ծագեցաւ.

8. ԽԱ.—գառիւն. ԺԷ.—հացին անմահին եղեր
գեղարուն. (վերջաւորութիւնը՝ տես ծանօթ. 6.
«Խաչն կենարար»):

Բ. Գտնուում է—Ժ 147-ա կրճատ. ԺԷ 172-ր
ուելի Ա և Բ տունը ԼԲ 227-ա. ԽԱ 198-ա.
ԽԲ 256-ր. ԿԴ 916. ԿԹ 195-ա կրճատ:

1. ԺԷ.—սեւտի ի ինչ կառուցեալ.

2. Ժ. ԺԷ. ԽԲ. ԿԴ. ԿԹ. Հունին—դասուցն.

3. ԽԱ.—արեգակնափայլ.

4. ԺԷ. ԼԲ. ԽԲ.—ոսկինմանչ.

5. ԺԷ. ԼԲ. ԽԲ.—բազալտին իրիսոսի. ԽԱ,
ԿԴ.—երկնաւոր փնային.

6. ԼԲ. ԽԱ. ԿԴ.—նորոգեալ:

Գ. Գտնուում է—ԽԲ 251-ր. ԿԹ 195-ր. և
ԺԷ 187-ա. որն ուելի Ա և Բ տունը.

1. ԽԲ. ԿԹ.—ընդդէմ ընդուն զօրացն.

յեր զմբռնեալսն ի ձեռաց մահու. ապաւէն և
յոյս հաւատացելոց:

Ի յերկրի երեւեալ ի յաննիւթ զոյից և
ի դրախտին դոյացար. ի նիւթից հրեշտակացն
երկրարոյս եղեր. ապաւէն և յոյս հաւատա-
ցելոց:

Ե. Աւուր.

Հի. Հ. Մահեղ ձայնէն յիսուսի սար-
սեալ 1 իշխանն անուրէն. և զարհուրեալ դո-
ղային սանգարամեք անդնդոց. ընդ անմարմ-
նոցն դասուցն քեզ երկիրպագանեմք:

Նլեալ յիսուս բարձրանալ ի քառաթե
սուրբ խաչին. և ժողովեալ հրէիցն ի միասին
խորհէին. զվէմն եղին պահապան և մատանեաւ
կնքեցին. ընդ անմարմնոցն դասուցն:

2 Ահեղ հզար զաւրութեամբ և մեծա-
ձայն բարբառով զոչէր յիսուս 3 ի խաչին 4 զէ-
լի էլին որ առ հայր. ընդ անմարմնոցն դա-
սուցն:

5 Երկրորդ աղամբ բազմեցաւ ի քառաթե
սուրբ խաչին. և զխոցումն ընկալաւ պար-
տեաց զշար թշնամին. ընդ անմարմնոցն դա-
սուցն:

(Կր շարունակութիւն).



2. ԺԷ.—վասնորոյ ինչ երկրպագեմք յօգնորին
մեզ ժամանեա, ուր խառնել և յաղորդ սուրբ նշանն:

3. ԽԲ. ԿԹ.—ի մայրն.

Գ. Հարականիս ընդհանուր իմաստն է բոլորո-
վին անկապ. և այս երեւում է աւելի Բ տան մէջ,
որի իմաստի հետ այլանդակուած է և իւր տաղա-
չափութիւնը: Գտնուում է—ԼԲ 229-ր. ԽԱ 200-ա.
ԾԱ 281-ա. ԿԴ 917. ԺԷ 174-ր. որն ուելի Ա և Բ,
Գ տները. ԽԲ. որն ուելի Ա և Գ տները.

1. ԽԱ.—իշխան.

2. ԾԱ.—անեղ.

3. ԾԱ. Հունին—ի.

4. ԿԴ. Հունին—զիլի կշին որ առ հայր.

5. Այս տունը ուելի միայն՝ ԿԴ.